



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԱՅԱՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՉԻ
 HOLY TRINITY ARMENIAN CHURCH

PARISH OFFICE 924-6514
 AUDITORIUM 923-0081

Հոկտեմբեր 23, 1981

Գերաշնորհ
 Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
 Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
 նիւ Եորք

Սիրելի Արքագան Հայր,

Ձերդ Արքագնութեան փափաքին համաձայն ներփակ կը գտնէք
 Հ.Օ.Մ. ի (Հայ Օգնութեան Միութեան) Ամենօրեայ Կարծարանի եւ
 Պապայեան Մանկապարտէզի Տնօրէն Պրն. Մարգար Շարապխանեանի հասցէն:

Հեռախօսով ինչպէս յայտնած էի Ձեզի, Գանատայի Թեմին կանոնադրու-
 թեան հայերէն թարգմանութիւնը կատարուած է: Նոյեմբեր մէկին ժամադրուած
 եմ Տօքթ. Կէօնճեանին հետ պէտք եղած սրբազրուութիւնները կատարելու
 համար: Նոյեմբեր 11ին, նիւ Եորք այցելութեանս առիթով կը յուսամ
 կարելի կըլլայ սրբազրուած ու մեքենազրուած երեք օրինակ Ձերդ Արքագնու-
 թեան յանձնել: Այս առիթով կը բերեմ նաեւ Գանատայի Թեմին կազմութեան
 նախապատրաստական աշխատանքներու մասնաւոր Յանձնաժողովին չորս նիստերու
 առենազրութիւնը ստորագրուած դիւանի բոլոր անդամներու կողմէ:

Ձերդ Արքագնութիւնը նիւ Եորք այցելութեանս առիթով տեղեակ
 կը պահեմ Խորոնթոյի համայնքին կացութեան մասին:

Մաղթելով Ձերդ Արքագնութեան Թեմական գործերուն կատարեալ
 յաջողութիւն ի Տեառնէ,

Մատչիմ ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն

Խոնարհաբար աղօթակից

Երվանդ Ա. Կիւրեան
 Երվանդ Ա. Կիւրեան
 Եղիշէ օ. վրդ. Կիւրեան